ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 14 » հունիսի 2022 թ.

№ ԱՍ/34.2-Մ2-9/1892-2022

«ԳՈՌՍՈՒ» ՍՊԸ-ի տնօրեն
Ս. Մկրտչյանին

«ԳՈՌՍՈՒ» ՍՊԸ-ի սնանկության գործով
կառավարիչ Ա. Ադամյանին

Հարգելի պարոնայք,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 13-ի «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնելու մասին» №252Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 2 էջ:

/Ա.Սաֆարյան

14.06.2022

X

ԱՐՍԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Գլխավոր քարտուղարի տեղակալ

Կատարող՝ Ս. Ղարախանյան ☎ 52- 85- 61 (124)

600.0252.13.06.22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2022 թվականի №252-Ա
քաղ. Երևան

«ԳՈՌՍՈՒ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2022 թվականի մայիսի 11-ի №07/11.1/3504-2022 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղեկացրել է, որ իրականացված ռադիոհսկման աշխատանքների արդյունքում Հանձնաժողովի կողմից «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված 164,175ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բազային կայանի վրա արձանագրվել են արտաշերտային ճառագայթումներ՝ «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող «ԱՅԳԵՁՈՐ» տաքսի ծառայության ռադիոցանցի 158,025ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բազային կայանից,

բ) Հանձնաժողովը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի մայիսի 19-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 19-ի №ԳԲ/34.2-Մ2-9/1592-2022 գրությամբ,

գ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, 2022 թվականի մայիսի 27-ի գրությամբ Հանձնաժողովին տեղեկացրել է, որ իրեն պատկանող տաքսի ծառայության ալեհավաքի անսարքության հետ կապված խնդիրը վերացվել է,

դ) Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 10-ի №ՍՇ/34.2-Մ2-9/1842-2022 գրությամբ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր կամ այլ տեղեկություններ ձեռք բերելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ փոխօգնության կարգով դիմել է Նախարարություն՝ ստանալու Ընկերության կողմից 158,025ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բազային ռադիոկայանի աշխատանքի վերաբերյալ տեղեկատվություն, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 5-րդ մասը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կասեցնել Հանձնաժողովի կողմից 2022 թվականի մայիսի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ մինչև Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 10-ի №ՍՇ/34.2-Մ2-9/1842-2022 գրությամբ հայցվող տեղեկատվությունը Նախարարությունից ստանալը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Ս. ՇԱՀԻՆՅԱՆ**

ք. Երևան
13 հունիսի 2022 թ.

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
ՀՀ ք. Երևան Սարյան 22

18/6 4-9

Հետ

ետ վերադառնա/
RETURN

- Անհայտ/ Unknown
- Տեղափոխված/ Gone away
- Թերի հասցե/ Insufficient address
- Մերժված/ Refused
- Չպահանջվա Unclaimed
- Այլ/Other

15 JUL 2022

ետ վերադարձման ամսաթիվ/
Return date

LO104174292AM

ք. Երևան
Իսկզնորի 70/5
«Զոռատու ՍՊԸ»-ի
գլխավոր
Ս. Մկրտչյանին

ԿՀ/34.2-ՍՀ-9/1892-2022

15 JUN 2022

10 JUL 2022